# ԱրՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՄԱՅԻՍՅԱՆ ԵՌԱՏՈՆԻ ԱՌԹԻՎ ԱՅՑԵԼԵԼ ԵՆ ԶՈՐԱՄԱՍ

*Մայիսյան եռատոնի առթիվ ԱրՊՀ ակ. Ս. Աբրահամյանի անվան հայոց լեզվի ամբիոնի դասախոս Ժենյա Պողոսյանի նախաձեռնությամբ մանկավարժության և սպորտի ֆակուլտետի ՆԶՊ և ՖՍ մասնագիտությամբ սովորող մի խումբ ուսանողներ այցելել են զորամաս:*



Այցի ընթացքում ուսանողները հանդես են եկել ելույթներով, ասմունքով ու պարային կատարումներով: Մշակութային ծրագրից բացի, ուսանողները զինվորների համար կազմակերպել են նաև ինտելեկտուալ խաղ՝ հաղթողներին պարգևատրելով գրքերով:

Համալսարանականները զորամասին են հանձնել նաև հուշանվեր, գրքեր: Կարևորելով բուհ-բանակ համագործակցությունը՝ միջոցառման նախաձեռնող Ժենյա Պողոսյանը նշել է, որ այս այցով փորձել են զինվորների առօրյան դարձնել ավելի հետաքրքիր և բովանդակալից:

«Մայիսյան եռատոնի առթիվ մեր այցելությունը զորամաս մի քանի խորհուրդ ունի. նախ՝շնորհավորել մեր զինվորների եռատոնը, ապա ուսանողներին ծանոթացնել զինվորի առօրյային, բանակային կյանքին, ինչպես նաև զինվորների առօրյան դարձնել փոքր-ինչ գունավոր և տարբերվող մյուս օրերից»,-նշել է Ժ. Պողոսյանը՝ հավելելով, որ ուսանողները մեծ սիրով են պատրաստվում նման միջոցառումներին, մանավանդ, երբ խոսքը վերաբերում է զորամաս այցին, որովհետև լինել զինվորի կողքին՝ յուրաքանչյուր ուսանողի համար միշտ ցանկալի է և սպասված:

# «ԺԵՍՏ» ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԸ ԱրՊՀ-ՈՒՄ ԱՆՑ ԵՆ ԿԱՑՐԵԼ ՎԱՐՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐ



*Արցախի պետական համալսարանի հոգեբանական կենտրոնի և ԱԵԳՄՄ առողջապահական միության համագործակցության շրջանակում մայիսի 26-ին ԱրՊՀ-ում հյուրընկալվել և վարպետության դասեր են անցկացրել ՀՀ-ում գործող «Ժեստ» հոգեբանական կենտրոնի մասնագետները՝ սկիզբ դնելով նոր համագործակցության:*

Թեմաները, որոնց շուրջ հանդես եկան հոգեբանները, վերաբերում էին ոլորտի արդիական նշանակություն ունեցող խնդիրներին: «Ժեստ» հոգեբանական կենտրոնը հիմնադրվել է 2007 թվականին Արկադի և Մարիամ Մեհրաբյանների կողմից: Այսօր կենտրոնը համագործակցում է բազմաթիվ բուժհիմնարկների, կրթության ոլորտի օղակների ներկայացուցիչների հետ: Կրթական հաստատություն կատարած առաջին այցը Արցախի պետական համալսարանն է, որը, Մ. Մեհրաբյանի խոսքով, մի քանի նպատակ է հետապնդում: Նախ՝ հոգեբանական աջակցության ցուցաբերում, վարպետության դասերի միջոցով գիտելիքի տրամադրում, ապա՝ համագործակցության առաջարկ, որը ենթադրում է ԱրՊՀ ուսանողների մասնակցությունը «Ժեստ» հոգեբանական կենտրոնի կողմից կազմակերպվելիք վերապատրաստման դասընթացներին, ինչպես նաև «Լավագույն հոգեբան» մրցույթին:

«Մրցույթին կարող են մասնակցել հոգեբանություն մասնագիտությամբ սովորող ուսանողները: Մասնակցելու համար անհրաժեշտ է բուհից ներկայացնել տեղեկանք, ինքնակենսագրական կամ CV-ն: Մրցույթն անցկացվելու է երեք փուլով և հիմնված կլինի միայն ու միայն ուսանողի աշխատասիրության, նպատակասլացության և գիտելիքների վրա»,-նշել է Մ. Մեհրաբյանը և տեղեկացրել, որ մրցույթի հաղթող ուսանողի այս տարվա ուսման վարձավճարը կվճարի «Ժեստ» հոգեբանական կենտրոնը: Հայտերի ընդունման վերջնաժամկետն է հունիսի 1-ը:

ԱրՊՀ ՈՒՇՀՀՏՍ գծով պրոռեկտոր, հ.գ.թ. Վիտյա Յարամիշյանը շնորհակալություն է հայտնել արդյունավետ միջոցառման համար՝ հույս հայտնելով, որ համագործակցությունը շարունակական է լինելու: Վարպետության դասին ներկա էին ԱրՊՀ ուսանողներ, դասախոսներ, հոգեբանությամբ հետաքրքրված անձինք:




«ԱՐՑԱԽԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ամսաթերթ

Հիմնադիր՝ «ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊՈԱԿ

Հրատարակվում է 1994 թվականից

**Խմբագիր՝ Զարինե Սառաջյան**

Մեր հասցեն՝ Մ.Գոշի 5:
Հեռ.՝ (047) 94 04 91

Տպաքանակ՝ 400

Տպագրվում է Արցախի պետական համալսարանի հրատարակչության տպարանում

Իմացի՛ր քո համալսարանի մասին:

Այցելի՛ր asu.am կայք:

www.asu.am



# ԱՐՑԱԽԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ



ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՄՍԱԹԵՐԹ - ЕЖЕМЕСЯЧНАЯ ГАЗЕТА «АРЦАХИ АМАЛСАРАН»

№ 04(218)
մայիս, 2019


# ԱրՊՀ ՌԵԿՏՈՐ ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ՄԱՅԻՍՅԱՆ ԵՌԱՏՈՆԻ ԱՌԹԻՎ



*Հարգելի՛ հայրենակիցներ.*

*Ջերմորեն շնորհավորում եմ ձեզ Հաղթանակի տոնի, Արցախի Հանրապետության պաշտպանության բանակի կազմավորման օրվա եւ Շուշիի ազատագրման 27-րդ տարեդարձի առթիվ:*

*Մայիսը հայ ժողովրդի համար հաղթանակների ամիս է: Հաղթանակներ, որոնք ձեռք ենք բերել մեր միասնականության, նպատակասլացության, կամքի ուժի և հայրենասիրության արդյունքում: Արցախի պետական համալսարանը համազգային նշանակության բոլոր իրադարձություններում եղել է առաջամարտիկների շարքում: Առհավատչյան՝ 1988-ի Արցախյան շարժումը, ազատագրական պատերազմը, 2016թ. ապրիլյան պատերազմը: Մեր պետականության համար բախտորոշ բոլոր իրավիճակներում Արցախի մայր բուհի ուսանողներն իրենց նպաստն են բերել հայրենիքին: Փառք ու պատիվ այսօրվա մեր հաղթանակների համար հավերժի ճամփորդ դարձած նահատակներին: Փառք ու պատիվ նաև մեր կողքին ապրող և արարող այն հերոսներին, որոնց շնորհիվ կերտվեցին հաղթանակներ:*

*Մայիսյան փառապանծ եռատոնի առթիվ շնորհավորելով բոլորիդ՝ մաղթում եմ, որ այսուհետ շարունակվեն մեր երկրում հաղթանակներ արձանագրվել նաև գիտության, կրթության, մշակույթի, սպորտի և մյուս բոլոր բնագավառներում՝ ի նպաստ մեր հայրենիքի հզորացման: Խաղաղություն մեր հայրենիքին և նորանոր նվաճումներ:*

# ՇՆՈՐՀԱՎՈ՛Ր ՄԱՅԻՍՅԱՆ ԵՌԱՏՈՆ

*Հայ ժողովուրդը մայիսի 9-ին տոնում է եռատոնը՝ Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակը, Արցախի Հանրապետության պաշտպանության բանակի կազմավորման օրը եւ Շուշիի ազատագրման տարեդարձը:*



Մայիսի 9-ին Ստեփանակերտում տոնական տրամադրություն էր տիրում: Վաղ առավոտից հազարավոր քաղաքացիներ երթով շարժվել են դեպի Ստեփանակերտի քաղաքային հուշահամալիր և ծաղիկներ խոնարհել Արցախյան ազատամարտի, Հայրենական մեծ պատերազմում զոհված հայորդիների հիշատակը հավերժացնող հուշարձաններին:

Երթին մասնակցել և զոհված հայորդիների հիշատակը հավերժացնող հուշարձանին ծաղիկներ են խոնարհել նաև ԱրՊՀ ուսանողներն ու դասախոսական կազմը՝ ռեկտոր Արմեն Սարգսյանի ղեկավարությամբ:

# ԿԱՅԱՑԵԼ Է ԳԻՏԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ



*Մայիսի 3-ին կայացած ԱրՊՀ գիտական խորհրդի նիստում քննարկվել և հաստատվել են մի շարք փաստաթղթեր, երաշխավորվել աշխատություններ:*

Օրակարգի հաստատումից հետո ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը տեղեկություններ է ներկայացրել համալսարանի հավատարմագրման գործընթացի նախապատրաստական աշխատանքների մասին` նշելով, որ օրեր առաջ երևանյան այցելության ընթացքում ունեցած հանդիպումներով հստակեցվել են մի շարք անելիքներ և խնդիրներ:

Ըստ ռեկտորի` այս ընթացքում նախատեսված տասը չափանիշի գծով հասցրել են ձևավորել հանձնաժողովներ, հրատարակել ԱրՊՀ գործունեությունը համակարգող իրավական ակտերի ժողովածու, ԱրՊՀ ռազմավարական ծրագիրը և դրա իրականացման ժամանակացույցպլանը, տպագրության է նախապատրաստվել ԱրՊՀ գործունեության գնահատման չափանիշները, քննարկել ինքնավերլուծության նախնական տարբերակը: Ա. Սարգսյանը հիշեցրել է նաև համալսարանականների վերապատրաստումը ՀՀ մասնագիտական կրթության ՈԱԱԿ-ում` հավելելով, որ կենտրոնի մասնագետները հերթական անգամ հրավիրվելու են տեղում աշխատանքներ իրականացնելու:

Պատասխանատուների կողմից գիտխորհրդի հաստատմանն են ներկայացվել ուսումնական պլանների ձևաթերթերն ու դասընթացի նկարագրի և մասնագրի ձևանմուշները:

«Տևական ժամանակ մեր կողմից ուսումնասիրվել են հայաստանյան, ռուսաստանյան և արտասահմանյան մի շարք առաջատար բուհերի մասնագիտությունների ուսումնական պլանները, սեփականը ձևավորելու շուրջ քննարկումներ կազմակերպվել բուհի ղեկավարության և ուսանողության հետ, որի արդյունքում ձևավորվել է առաջարկվող ձևաթերթը»,- ասել է ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Գեորգի Սահակյանը` շեշտելով, որ այն հիմնված է նախորդ տարիների արդյունքների վերլուծության վրա և չափելի ու համադրելի է բուհական ծրագրերին ներկայացվող պահանջների հետ: Նախքան նմուշի հաստատումը` պրոռեկտորը լրացուցիչ պարզաբանումներ է կատարել գիտխորհրդի անդամների նկատառումներին ի պատասխան:

Ինչ վերաբերում է առարկայական նկարագրերի և մասնագրերի ձևանմուշներին, ապա ՈԱԿ պետ Համլիկ Մինասյանը նշել է, որ նկարագրերում առաջարկվող փոփոխություններով առավել լիարժեք են նկարագրվում և ձևակերպվում ակնկալվող վերջնարդյունքները:

Ամփոփիչ ատեստավորման քննություններին է անդրադարձել ուսումնական գործընթացի կազմակերպման բաժնի պետ Իրինա Խաչատրյանը` նշելով, որ նախապատրաստական աշխատանքներն ավարտված են, և բաժինը պատրաստ է հավուր պատշաճի կազմակերպելու, ապահովելու քննությունների ընթացքը:

Գիտության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր Վալերի Ավանեսյանի խոսքը վերաբերում էր «ԱրՊՀ գիտական տեղեկագրի» աշխատանքներին. «ԱրՊՀ գիտական տեղեկագիր» տարեգիրքը ՀՀ ԲՈԿ-ի չափանիշներին համապատասխանող պարբերական դարձնելու ցանկությամբ առաջարկվում է տպագրության երաշխավորել տեղեկագրի երկու` հասարակական և բնական գիտությունների պրակները, որոնք նախատեսվում են հրատարակել հունիսին»:

Գիտխորհուրդը տպագրության է երաշխավորել վերջին հինգ տարվա կտրվածքով վեց բնագավառ և յոթանասուներկու ցուցանիշ ներառող «ԱրՊՀ գործունեության ցուցանիշների ժողովածուն», մեկ ուսումնամեթոդական ձեռնարկ և մեկ մենագրություն, հաստատել ԱրՊՀ մասնագիտությունների վարձավճարների չափը: Միաձայն է ընդունվել նաև բ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Լավրենտի Հովհաննիսյանին ակադեմիկոս Ս.Աբրահամյանի անվան հայոց լեզվի ամբիոնի զարգացման գործում ունեցած ավանդի և ծննդյան 75 - ամյակի կապակցությամբ ԱրՊՀ պատվավոր պրոֆեսորի կոչում շնորհելու մասին առաջարկը:

Գիտխորհուրդը քննարկել է նաև էթիկայի հանձնաժողովի ներկայացրած որոշման առաջարկը` կապված ակադեմիական անազնվություն ցուցաբերելու դեպքի հետ: Գիտխորհրդի քվեարկության արդյունքում մանկավարժության և հոգեբանության ամբիոնի դասախոս, մ.գ.թ., դոցենտի պաշտոնակատար Արմինե Բաղդասարյանին ակադեմիական անազնվություն ցուցաբերելու համար տրվել է խիստ նկատողություն:



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆՆ ԱՅՑԵԼԵԼ Է ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ



*Մայիսի 4-ին Հայաստանի ամերիկյան համալսարանի փոխնախագահ Աշոտ Ղազարյանի գլխավորած պատվիրակությունն այցելել է Արցախի պետական համալսարան և հանդիպում ունեցել համալսարանի ղեկավարության հետ: Պատվիրակության կազմում էին նաև ՀԱՀ գրադարանի տնօրեն Սաթենիկ Ավագյանը, ինֆորմացիոն տեխնոլոգիաների բաժնի տնօրեն Պերճ Գաթրճյանը, ուսանողների գրանցման և կառավարման բաժնի տնօրեն Շաղիկ Արծրունին:*

ՀԱՀ փոխնախագահ Աշոտ Ղազարյանը, ողջունելով ներկաներին, նշել է, որ այցի նպատակներից մեկը համալսարանի վերակառուցման աշխատանքների ընթացքին հետևելն է:

«Դոնոր պարոն Թրփանջյանի խնդրանքով և առաջարկով ենք այստեղ` հետևելու աշխատանքների ընթացքին: Նրա ցանկությունն է նաև, որ համալսարանի վերակառուցումը միայն ֆիզիկական առումով չլինի, այլ նաև բոլոր հնարավոր միջոցները պետք է ներդնենք` նոր տեխնոլոգիաներ, կրթական նոր համակարգեր, որոնք միտված կլինեն ապագայում ավելի զարգացած համալսարան ունենալուն, և դրանք կփորձենք բուհում համատեղ իրականացնել` շինարարության աշխատանքներին զուգընթաց»,-նշել է Ա. Ղազարյանը:

Խոսելով համալսարանի շենքի շինարարության աշխատանքներից` նա գոհունակություն է հայտնել ընթացքից:

«Շինարարությունը նորմալ ընթացքի մեջ է, այդ մասով բավական բավարարված ենք: Շնորհակալ ենք ԱՀ քաղաքաշինության նախարար Կարեն Շահրամանյանին, որովհետև լուրջ վերահսկողություն է իրականացվում, բավարարված ենք և՛ որակով, և՛ ընթացքով»,-ասել է ՀԱՀ փոխնախագահը:

«Ժամանակակից գրադարան, ինֆորմացիոն տեխնոլոգիաների ներգրավում, էլեկտրոնային կառավարման նոր գործիքների ներդնումը ժամանակակից ուսուցման գործիքներն են, որոնք ապահովում են ավելի արդյունավետ կրթություն: Մենք փորձում ենք ներգրավել նաև բոլոր այն առողջ ուժերին, ովքեր պատրաստ են ժամանակակից կրթական գործիքներ ներդնելով օգնել ԱրՊՀ-ին»,-ասել է Ա. Ղազարյանը:

«Կրթության առաջնահերթ գործիքներից մեկը գրադարանն է: Ժամանակակից գրադարանը միայն գիրքը չէ, այլև ուսանողի հետ համագործակցելու յուրահատուկ հարթակ»,-ասել է ՀԱՀ գրադարանի տնօրեն Սաթենիկ Ավագյանը` հավելելով, որ մասնագիտական զարգացումն այս ոլորտում անհրաժեշտություն է:

Ինֆորմացիոն տեխնոլոգիաների բաժնի տնօրեն Պերճ Գաթրճյանը ներկայացրեց ՀԱՀ-ում ներդրված տեղեկատվական տեխնոլոգիաների գործառույթները:

# «ԹՇՆԱՄԻՆ ՍՊԱՍՈՒՄ Է ՄԵՐ ԹՈՒԼԱՑՄԱՆԸ, ՈՐՊԵՍԶԻ ՈՒԺԳԻՆ ՀԱՐՎԱԾ ՀԱՍՑՆԻ: ՄԵՐ ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՐԲԵՔ ՉՊԻՏԻ ՎԵՐ ԴԱՍԵՆՔ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԻՑ». ԱՐՄԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



***Մայիսի 16-ին, ԱՀ ԱԺ պատգամավոր Արմեն Սարգսյանի նախաձեռնությամբ Արցախի պետական համալսարանում հյուրընկալվել և դասախոսությամբ հանդես է եկել ռազմական վելուծաբան և փորձագետ Արմեն Հարությունյանը: «Ռազմական անվտանգություն և ռազմավարություն» թեմայով դասախոսությանը ներկա էին ԱրՊՀ դասախոսներ, ուսանողներ, Արցախում ապրող փորձագետներ:***

«Հաշվի առնելով պատերազմի լուրջ վտանգը և տարածաշրջանում տեղի ունեցող իրադարձությունները` թեման համարում եմ արդիական: Ապագա քաղաքագետների համար շատ կարևոր է հստակ պատկերացում կազմելը, թե ինչ է իրենից ներկայացնում ռազմական անվտանգությունը, որն է այն ռազմական դոկտրինը, որն ամենաարդյունավետը կլինի»,-թեմայի արդիականությունն է հիմնավորել փորձագետը և հավելել, որ մեր պետությունը որդեգրել է պաշտպանական ռազմավարությունը, որը, նրա կարծիքով, արդյունավետ չէ, ինչի ապացույցն էլ նա մատնանշում է ապրիլյան պատերազմը:

«Այդ դոկտրինը չի կարող ապահովել թշնամու ջախջախումը և մեր երկրի համար երկարատև խաղաղություն: Դրա համար մենք պետք է անցնենք հարձակողական դոկտրինին, որի համար կպահանջվի 3-ից 4 տարի: Դրա համար անհրաժեշտ է բարեփոխել մեր բանակը, արդիականացնել, ձեռք բերել նորագույն զինտեխնիկա, բայց մինչև այդ մենք ամեն օր պետք է պատրաստ լինենք նոր պատերազմի, և անհրաժեշտության դեպքում բանակն ի վիճակի լինի իրականացնել կանխարգելիչ հարված, հարվածի համար ունենք ներուժ»:

Ռազմական վերլուծաբանն անդրադարձել է նաև դաշնակիցներ ունենալու հարցին` կարևորելով սեփական ուժերի վրա հենվելու անհրաժեշտությունը:

## ՄԻՋՈՑԱՌՈՒՄ՝ ՆՎԻՐՎԱԾ ԼԵԶՎԱԲԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ 95-ԱՄՅԱԿԻՆ

*Մայիսի 17-ին, ԱրՊՀ ասպիրանտ Արմինե Արզումանյանի նախաձեռնությամբ կազմակերպվել է միջոցառում՝ նվիրված լեզվաբան Ալեքսանդր Մարգարյանի 95-ամյակին:*



Միջոցառման ընթացքում հայոց լեզու և գրականություն մասնագիտությամբ բակալավրիատում սովորող ուսանողներն ու հայոց լեզվի գրաքննադատության պատմություն մասնագիտացմամբ սովորող մագիստրանտները զեկուցումներով գնահատել և արժևորել են լեզվաբանի աշխատությունները, գիտության ոլորտում ունեցած նրա վաստակը: Կարևորելով լեզվաբանի գիտական-ստեղծագործական ավանդը հայերենագիտության ոլորտում՝ միջոցառման նախաձեռնող Արմինե Արզումանյանն իր ելույթում ներկայացրել է Ալեքսանդր Մարգարյանի կյանքի ու գործունեության առանցքային դրվագները, անդրադարձել գիտական աշխատություններին, ուսումնասիրություններին և նրա բերած գիտական նորարարությանը:

«Ալեքսանդր Մարգարյանը նոր ժամանակների այն լեզվաբաններից է, ովքեր զգալի վաստակ ունեն հայ լեզվաբանության և առհասարակ հայագիտության մեջ: Նա հեղինակ է երկու տասնյակ մենագրությունների և հարյուրից ավելի գիտական հոդվածների: Հայերենագիտության մեջ արժեքավոր ներդրում կարելի է համարել Ալեքսանդր Մարգարյանի ուսումնասիրությունները, որոնց կենտրոնում հայերենի կառուցվածքային հիմնախնդիրներն են»,-ասել է Ա. Արզումանյանը:

## ՄԻՋՈՑԱՌՈՒՄ՝ ՄԱՅԻՍՅԱՆ ԵՌԱՏՈՆԻ ԱՌԹԻՎ



*ԱրՊՀ բանասիրական ֆակուլտետի հայոց լեզու և գրականություն մասնագիտությամբ սովորող ուսանողները գրականության և ժուռնալիստիկայի ամբիոնի դասախոս, բ.գ.թ., դոցենտ Զինաիդա Բալայանի նախաձեռնությամբ մայիսյան տոների առթիվ միջոցառում են կազմակերպել, որը մեկնարկել է ԱրՊՀ զոհված ուսանողների հիշատակը հավերժացնող հուշակոթողին ծաղիկներ խոնարհելով:*

Միջոցառման ընթացքում ուսանողները դրվագներ են ներկայացրել մայիսյան եռատոնի պատմությունից, ասմունքել, հանդես եկել պարային, երաժշտական կատարումներով:

Ողջունելով ներկաներին և կարևորելով մայիսյան հաղթանակների դերն ու նշանակությունը հայ ժողովրդի պատմության մեջ՝ Զինաիդա Բալայանը նշել է, որ բոլոր հաղթանակները կերտվել են տղաների խիզախության, արիության և հայրենիքին հավատարմության շնորհիվ:

Անդրադառնալով Հայրենական մեծ պատերազմի մասնակից արցախցիների հերոսական սխրանքին՝ Զինաիդա Բալայանը ընդգծել է, որ հայ ժողովուրդը իր առյուծի բաժինն է ունեցել հաղթանակի կերտման գործում:

## ԲՈՒՀ-ԴՊՐՈՑ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԴՊՐՈՑՈՒՄ ԴԱՍԸ ՎԱՐԵԼ ԵՆ ԱրՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

*ԱրՊՀ տնտեսագիտության ֆակուլտետի ֆինանսներ երրորդ կուրսի ուսանողները, ֆինանսահաշվային ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Նարինե Ավանեսյանի ղեկավարությամբ, Ստեփանակերտի Վիտալի Ջհանգիրյանի անվան հ. 11 ավագ դպրոցի աշակերտների համար հանդես են եկել «Վարկ և ավանդ» թեմայով դասախոսությամբ:*



Աշակերտների խոսքերով՝ նման դասընթացները բավականին հետաքրքիր և ուսուցողականեն: Ուսանողները իրենց հերթին կարևորել են նման դասընթացների հաճախակի կազմակերպումը՝ նշելով, որ այն նպաստում է ավագ դասարանների աշակերտների շրջանում ֆինանսական գրագիտության մակարդակի բարձրացմանը: Նրանք նաև թեման ամրապնդելու նպատակով աշակերտներին հանձնարարել են գործնական առաջադրանք:



## ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԳՈՀԱՑՈՒՑԻՉ ԵՆ

***Մայիսի 20-ից 25-ը ԱրՊՀ-ում անց են կացվել 2018-2019 ուսումնական տարվա ամփոփիչ ատեստավորման քննությունները, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանությունները: 2018-2019 ուս. տարվա ամփոփիչ ատեստավորման քննություններին մասնակցել է 674 ուսանող, որից 4-ը՝ նախորդ տարիներից, ընդ որում՝ բակալավրիատի 527 ուսանող, առկա ուսուցման համակարգում՝ 388, հեռակա ուսուցման համակարգում՝ 139 ուսանող:***

Ընդհանուր առմամբ գոհունակություն հայտնելով քննությունների ընթացքից և ուսանողների պատասխաններից՝ ԱրՊՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Գեորգի Սահակյանը նշել է, որ այս տարի բավականին փոփոխություններ են ներառել գործընթացում, որոնք միտված են արդյունավետության բարձրացմանը:

«Այս տարի մենք որոշեցինք քննական հանձնաժողովներում ընդգրկել մեր արտաքին շահակիցներին, այսինքն՝ գործատուներին, որը շատ կարևոր քայլ է: Մանկավարժական ուղղվածությամբ մասնագիտություններում ձգտել ենք ընդգրկել դպրոցների տնօրեններին կամ ուսուցիչներին՝ համապատասխան մասնագիտությամբ»,- ասել է Գ. Սահակյանը՝ այս տարվա նորարարական մեթոդներից շեշտելով նաև հանձնաժողովների նախագահների հաշվետվության նոր կարգը:

Ամփոփիչ ատեստավորման քննությունների արդյունքների մասին տեղեկացանք ԱրՊՀ ուսումնական գործընթացի կազմակերպման բաժնի պետ Իրինա Խաչատրյանից: Նրա խոսքով՝ ԱրՊՀ բակալավրիատի 85 շրջանավարտի կտրվի գերազանցության դիպլոմ, որը կազմում է մոտ 22%-ը: Առկա ուսուցման համակարգում «անբավարար» գնահատական ստացել է 3 հոգի: Մագիստրատուրան ավարտել է 146, իսկ գերազանցության դիպլոմով՝42 մագիստրանտ, որը կազմում է մոտ 29%-ը:

Գերազանցության դիպլոմով բակալավրիատն ու մագիստրատուրան ավարտել է 127 շրջանավարտ, որը կազմում է ընդհանուր շրջանավարտների մոտ 19%-ը:

Ընդհանուր առմամբ «գերազանց» գնահատական ստացել է 271 ուսանող (40%), որից բակալավրիատի առկա ուսուցման համակարգից՝ 170 (44%), հեռակա ուսուցման համակարգից՝ 4 (3%) և մագիստրատուրայից՝ 97 ուսանող (66%): «Լավ» գնահատական ստացել է ընդամենը 175 ուսանող, «բավարար»՝ 224, «անբավարար»՝ 3, իսկ քննություններին չներկայացած՝ երկու ուսանող:

«Ամփոփիչ ատեստավորման քննությունները, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանություններն անցել են կազմակերպված, առանց արտառոց դեպքերի»,-նշել է ուսումնական գործընթացի կազմակերպման բաժնի պետը՝ գոհունակություն հայտնելով արձանագրված արդյունքներից:

Պատասխանատուն տեղեկացրեց նաև, որ հանձնաժողովների նախագահների կողմից նշված են 19 լավագույն ավարտական աշխատանք բակալավրիատից, որը կազմում է մոտ 9% -ը (212 աշխատանքից) և 10 մագիստրոսական թեզ, որը կազմում է մոտ 7%-ը (147 մագ.թեզից):

«Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության ամփոփիչ ատեստավորման քննությունների քննական հանձնաժողովի նախագահ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բ.գ.դ., պրոֆեսոր Լավրենտի Հովհաննիսյանը ևս գոհունակություն է հայտնել ուսանողների պատասխաններից՝ նշելով. «Պատասխաններից գոհ եմ, և երևում է դասախոսների աշխատանքի արդյունքը: Վստահ եմ, որ այսօրվա մեր շրջանավարտները հետագայում հաջողության են հասնելու»:

## ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

*Հավատարմագրման գործընթացի կազմակերպման նպատակով ԱրՊՀ մասնագետներն արդեն մի քանի անգամ վերապատրաստման դասընթացներ են անցել ՀՀ մասնագիտական կրթության ՈԱԱԿ-ում, ՈԱԱԿ փորձագետներն իրենց հերթին աշխատաժողովներ են անցկացրել Արցախի մայր բուհում: Մասնագիտական խորհրդատվություն ցուցաբերելու նպատակով այս օրերին Արցախում է և ԱրՊՀ-ում դասընթացներ է վարում ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող, պ.գ.թ. Լիլիթ Զաքարյանը:*



Տասը չափանիշների գծով ստեղծված համապատասխան հանձնաժողովների հետ առանձին հանդիպումներով 5-օրյա դասընթացներով Լ. Զաքարյանը քննարկել է մշակվող փաստաթղթերը՝ ներկայացնելով մասնագիտական-փորձագիտական կարծիք:

# ՀՀ ՄԻՊ ԱՐՄԱՆ ԹԱԹՈՅԱՆԸ ԱՅՑԵԼԵԼ Է ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ԵՎ ՀԱՆԴԻՊԵԼ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԻ ՀԵՏ

*Մայիսի 13-ին, Արցախի պետական համալսարան է այցելել ՀՀ ՄԻՊ Արման Թաթոյանի գլխավորած պատվիրակությունը, որի կազմում էին ՄԻՊ աշխատակազմի ներկայացուցիչներ: Պատվիրակությանն ուղեկցում էին ԱՀ ՄԻՊ Արտակ Բեգլարյանն ու աշխատակազմի ներկայացուցիչներ:*



ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը ողջունել և շնորհակալություն է հայտնել ՀՀ ՄԻՊ Արման Թաթոյանին՝ Արցախի պետական համալսարան այցելելու համար և բարձր գնահատել ՀՀ ՄԻՊ-ի գործունեությունը: Այցի ընթացքում Արման Թաթոյանը համալսարանականներին է ներկայացրել ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի ծավալած գործունեությունը, պատասխանել հնչած հարցերին:

Բանախոսը տեղեկացրել է, որ Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի մի քանի տարիների գործունեությունը ենթարկվել է միջազգային վերանայման՝ ՄԱԿ-ի Փարիզյան սկզբունքներով սահմանված մարդու իրավունքների ազգային ինստիտուտներին առաջադրվող անկախության պահանջներին համապատասխանության տեսանկյունից, որի արդյունքում Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի հաստատությանը շնորհվել է ամենաբարձր «A» միջազգային հեղինակավոր կարգավիճակը:

Այս համատեքստում, խոսելով Ադրբեջանի նույն կառույցի մասին, պաշտպանը հատկանշել է վերջինիս դիրքերի նվազման արդյունքները, քանի որ Ադրբեջանը միջազգային բոլոր հարթակներն օգտագործում է Արցախի հարցը բարձրացնելու նպատակով՝ քաղաքականացնելով այդ կառույցը:

Արման Թաթոյանը նաև կարևորել է Արցախի ՄԻՊ-ի գործունեությունը՝ Ադրբեջանի կողմից հայատյացության դրսևորումները զեկույցներով միջազգային կառույցներին ներկայացնելու գործում:

Պաշտպանը նշել է նաև, որ վերջին տարիներին ՄԻՊ աշխատանքի ծավալները շեշտակի աճել են, այդ թվում՝ այցերը երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններ, քրեակատարողական հաստատություններ, կրթական գործունեության ծավալում, զինված ուժերի հետ համագործակցություն և այլն:



Նա խոսել է նաև խորհրդարանի, արտաքին գործերի նախարարության հետ ունեցած համագործակցության մասին, որոնք նպաստում են միջազգային զեկույցներ պատրաստելուն և Արցախի հարցը համապատասխան հարթակներում ներկայացնելուն:

Արման Թաթոյանը, անդրադառնալով Լեռնային Ղարաբաղի, Ադրբեջանի և Հայաստանի միջև կնքված հրադադարի մասին համաձայնագրի՝ 25-ամյակի առթիվ հղած ուղերձներին, մասնավորապես շեշտել է, որ խաղաղությունն է մարդու իրավունքների պաշտպանության միակ երաշխիքը:

Խոսելով Արցախի քաղաքական կարգավիճակի հետ կապված ԱՀ ՄԻՊ-ի աշխատանքներից՝ ընդգծել է, որ Արցախը պետք է դառնա միջազգային կառույցների բաղկացուցիչ մաս:

«Միջազգային կառույցները, խուսափելով Արցախ այցերից, առաջին հերթին խախտում են հենց մարդու իրավունքները, որը անթույլատրելի ենք համարում՝ կապված մարդու իրավունքների հետ», -նշել է նա:

«Արցախը մեզ համար սիրելի վայր է, մեր հայրենիքի անբաժան մի մասը: Ամեն անգամ Արցախ այցելելով՝ անբացատրելի զգացողություններ եմ ունենում: Ուրախալի է նաև, որ վերանորոգվում է համալսարանի շենքը. համալսարանը կարևոր մշակութային օջախ է: Համոզված եմ, որ այն նոր թափ կհաղորդի բուհի կրթության զարգացմանը»,-ասել է Ա. Թաթոյանը՝ բարձր գնահատելով ԱրՊՀ շրջանավարտների մասնագիտական որակները և նշելով, որ Արցախը պետք է աշխարհին ներկայանա նաև իր բարձրորակ շրջանավարտներով:



# ԿԱՅԱՑԵԼ Է ԱրՊՀ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ. ՌԵԿՏՈՐԸ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼ Է ՄԻ ԽՈՒՄԲ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ

*Մայիսի 22-ին Ստեփանակերտի Շառլ Ազնավուրի անվան մշակույթի կենտրոնում տեղի է ունեցել ԱրՊՀ ուսանողական համագումար, որի ընթացքում ուսանողական խորհրդի նախագահ Դիանա Խաչատրյանը հանդես է եկել 2018-2019 ուստարում ԱրՊՀ ՈՒԽ կատարած աշխատանքների մասին հաշվետվությամբ:*



Ողջունելով համագումարի մասնակիցներին՝ ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը բարձր է գնահատել հաշվետու տարում ուսանողական խորհրդի կողմից կատարված աշխատանքները՝ կարևորելով ՈՒԽ կողմից կազմակերպած ներհամալսարանական և արտահամալսարանական միջոցառումները, տարբեր ուղղվածության կամավորական աշխատանքները, ինտելեկտուալ, մշակութային, գիտական, մարզական և այլ բնագավառներում իրականացրած ծրագրերը:

«Ուխ-ն, լինելով ինքնավար կառույց, ոչ միայն իրականացնում է աշխատանքներ, այլև մասնակցում է համալսարանական կարևոր որոշումների ընդունմանը՝ առաջարկություններով հանդես գալով ռեկտորատի և գիտխորհրդի նիստերում, և բոլոր կատարված աշխատանքների հիմքում դրված է ուսանողական կառույցի ինքնավարությունը»,-ասել է ռեկտորը:

Գնահատելով և արժևորելով տարվա ընթացքում տարբեր ոլորտներում հաջողություն արձանագրած ուսանողների աշխատանքը՝ ԱրՊՀ ռեկտորը շնորհակալություն է հայտնել նրանց և պարգևատրել պատվոգրերով ու նվերներով:

Համագումարին ելույթ է ունեցել նաև ՈՒՇՀՀՏԱ գծով պրոռեկտոր Վիտյա Յարամիշյանը, ով, կարևորելով ՈՒԽ կողմից կատարված աշխատանքը, խոսել է նաև առաջիկա անելիքների, 2019-2020 ուստարվա ծրագրերի մասին. «Այն միջոցառումներն ու ծրագրերը, որոնք ակնկալվում են, պետք է մեր ուսանողների ակտիվ մասնակցությամբ դարձնենք ավելի որակյալ և նպաստենք դրանց պատշաճ կազմակերպմանը»:

Հաշվետու տարում կատարած աշխատանքների մասին հաշվետվություններով հանդես են եկել նաև ուսանողական գիտական ընկերության նախագահը, ֆակուլտետների ՈՒԽ նախագահները, հանձնաժողովների պատասխանատուներ, դասախոսներ:

# ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՓՈՐՁՈՒՍՈՒՑՈՒՄՆ ԱՄՓՈՓԵԼ ԵՆ ՄԱՅԻՍՅԱՆ ԵՌԱՏՈՆԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՄԱՄԲ



*Ապրիլի 8-ից մայիսի 4-ը ԱրՊՀ բանասիրական ֆակուլտետի հայոց լեզու և գրականություն մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողները մանկավարժական փորձուսուցում են անցել Ստեփանակերտի Խաչատուր Աբովյանի անվան համար 1 հիմնական և Եղիշե Չարենցի անվան համար 7 հիմնական դպրոցներում:*

Սա արդեն մանկավարժական փորձուսուցման երկրորդ փուլն է՝ կիրառական փորձուսուցումը: Հենց կիրառական կամ ակտիվ փորձուսուցման ժամանակ է բացահայտվում ուսանողի մասնագիտական պատրաստվածության աստիճանը: Դասավանդման ընթացքում ուսանողը սկսում է գիտակցել, որ անհրաժեշտ է կրթել ազգանվեր սերունդ, ով կդառնա գիտելիքներով և կարողություններով հմտացած լիիրավ քաղաքացի: Մեկամսյա փորձուսուցման ընթացքում ուսանողները փորձել են հնարավորինս զարգացնել ուսուցիչ-աշակերտ երկկողմանի կապը, կիրառել մասնագիտական հմտություններ և ընդօրինակել վաստակաշատ ուսուցիչների առաջավոր փորձը, յուրացնել ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառման գաղտնիքները, զարգացնել «աշակերտակենտրոն» ուսուցումը: Մանկավարժական փորձուսուցման երկրորդ փուլը ամփոփվեց միջոցառմամբ՝ «Մայիսյան եռատոնը» խորագրով: Դիմելով ուսանողներին՝ փորձուսուցման պատասխանատուները մասնավորապես նշեցին. «Ձեր առջև դրված լուրջ աշխատանքը դուք կատարեցիք պատվով և հպարտությամբ, այսօր այդ ամենի ապացույցը տրամադրող մթնոլորտն է»:

Ուսանողները ևս գոհունակություն և երախտագիտություն են հայտնել դասախոսներին, ուսուցիչներին՝ փորձուսուցումն արդյունավետ կազմակերպելու և անցկացնելու համար:

*Սոնա ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆ*
*ՀԼԳ 3-րդ կուրս*

# ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱրՊՀ-ՈՒՄ՝ ՈՉ ՖՈՐՄԱԼ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ

*Մայիսի 3-ին ԱրՊՀ-ում հյուրընկալվել և դասախոսությամբ հանդես են եկել քաղաքագետ, քաղաքական և միջազգային հետազոտությունների հայկական կենտրոնի փորձագետ Ռուբեն Մեհրաբյանը և բիզնես-փորձագետ Վահե Ռոբեր Այվազյանը:*



ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը շնորհակալություն է հայտնել բանախոսներին՝ ԱրՊՀ այցելելու և արդիական թեմաներով դասախոսությամբ հանդես գալու համար՝ կարևորելով ոչ ֆորմալ կրթության նշանակությունը ուսումնագիտական կյանքի արդյունավետության բարձրացման գործում:

Հանդես գալով «Ժուռնալիստիկան և ֆեյքերը» թեմայով դասախոսությամբ՝ Ռուբեն Մեհրաբյանը նշել է, որ ներկայումս ապրում ենք տեղեկատվական հեղափոխության շրջանում և ՀՀ-ում ու Արցախում ինչ փոփոխություններ տեղի են ունեցել և դեռ ունենալու են, այդ ամենը տեղեկատվական հեղափոխության շնորհիվ է:

«Այսօր յուրաքանչյուր մարդ սոցցանցերի շնորհիվ կարող է լինել տեղեկատվություն արտադրող, տարածող և սպառող»,-ասում է նա և մատնանշում այդ երևույթից բխող նաև խնդիրները, որոնցից առանձնացնում է ֆեյքային տեղեկատվությունը:

Ըստ Ռուբեն Մեհրաբյանի՝ ֆեյքային տեղեկատվության դեմ պայքարի միակ ելքը քաղաքացիական բարձր գիտակցություն և մեդիագրագիտության բարձր մակարդակ ունեցող հասարակություն ունենալն է, որը ձևավորելու առաքելությունը լրագրողներինը պետք է լինի:

Հաջորդիվ դասախոսությամբ հանդես է եկել Վահե Ռոբեր Այվազյանը՝ «15 սխալները վաճառքում» թեմայով: Լսարանին ներկայացնելով այն հիմնական սխալները, որոնք խանգարում են արդյունավետ գործունեություն ծավալել մարքետինգում, բիզնես-փորձագետը օգտակար խորհուրդներ և սխալներից խուսափելու մասնագիտական քայլեր է առաջարկել բիզնեսով հետաքրքրվող ուսանողներին՝ հորդորելով երբեք չվախենալ խնդիրներից, ավելին՝ սիրել խնդիրը. «Երբեք մի վախեցեք, սիրեք խնդիրը և կհասնեք հաջողության»:

# ԱրՊՀ-ՈՒՄ ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ ԱՆԱՀԻՏ ՄԱՆԱՍՅԱՆԻ «ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԿԱՅՈՒՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԳՐԱՎԱԿԱՆ» ԳՐՔԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ



*Մայիսի 10-ին ԱրՊՀ է այցելել ԵՊՀ պատվիրակությունը, որի կազմում էին ՀՀ Արդարադատության ակադեմիայի պրոռեկտոր, ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի դոցենտ, ի.գ.թ. Անահիտ Մանասյանը, ԵՊՀ եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի դասախոս Անի Սիմոնյանը: Այցի ընթացքում տեղի է ունեցել Անահիտ Մանասյանի «Սահմանադրական կայունությունը՝ որպես կայուն ժողովրդավարության կարևորագույն գրավական» գրքի քննարկումը:*

Քննարկմանը ներկա էին ԱՀ Գերագույն դատարանի նախագահ Նարինե Նարիմանյանը, ԱՀ Գերագույն դատարանի դատավոր, ԲԴԽ նախագահ Գայանե Գրիգորյանը, ԱՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի նախագահ, ի.գ.թ. Անատոլի Թադևոսյանը, ԱրՊՀ իրավունքի ամբիոնի դասախոսներ, իրավագիտություն մասնագիտությամբ սովորող ուսանողներ:

Մենագրության հեղինակ Անահիտ Մանասյանը նշել է, որ գրքի շնորհանդեսը ՀՀ-ում կազմակերպելուց հետո անհրաժեշտություն էր այն նաև Արցախում ներկայացնելը, քանի որ, ըստ նրա, Արցախի հետ կապված է նոստալգիկ հուշերով և արցախյան միջավայրում առանձնահատուկ ջերմություն կա:

Ա. Մանասյանը, խոսելով գրքի հիմնական գաղափարների մասին, նշել է, որ մենագրության շրջանակներում հետազոտվել են ժողովրդավարության դոկտրինը, սահմանադրական կայունությանն ու Սահմանադրության զարգացմանն առնչվող խնդիրները, սահմանադրական վեճերի հաղթահարման իրավական կառուցակարգերը, Սահմանադրության պաշտոնական մեկնաբանության, անմիջական գործողության առանձնահատկությունները, Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների զարգացման հիմնախնդիրները, ինչպես նաև «սահմանադրական ինքնություն» հասկացությունն ու դրա արժեբանական բնութագիրը:



# ԱրՊՀ-ՈՒՄ ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅԱՄԲ ՀԱՆԴԵՍ Է ԵԿԵԼ ՍԴ ՆԱԽԱԳԱՀ ՀՐԱՅՐ ԹՈՎՄԱՍՅԱՆԸ



*Ոչ ֆորմալ կրթության ծրագրի շրջանակներում մայիսի 24-ին ԱրՊՀ-ում դասախոսությամբ հանդես է եկել ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահ Հրայր Թովմասյանը:*

Ողջունելով ՀՀ Սահմանադրական դատարանի պատվիրակությանը՝ ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը կարևորել է ոչ ֆորմալ կրթության ծրագրի իրականացումն ու շեշտել, որ մայր բուհի հիմնադրման 50-ամյակի կապակցությամբ ծրագիրը նոր թափ է ստացել:

Նախքան բանախոսությանն անցնելը՝ ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահը շնորհակալություն հատնեց հյուրընկալության համար՝ նշելով, որ իրենց համար պատիվ է ոչ միայն հայրենիքի արցախյան հատվածի սահմանադրության մշակման աշխատանքներին մասնակից լինելը, այլև համալսարանականների հետ փորձով և գիտելիքներով կիսվելը:

Բանախոսությունը վերաբերում էր պետության կյանքում Սահմանադրական դատարանի դերին և նշանակությանը, հիմնական գործառույթներին:

Հ.Թովմասյանն անդրադարձավ նաև ԱրՊՀ-ի հետ հնարավոր համագործակցությանը. «Պետք է գտնել ձևաչափեր, որոնք հնարավորություն կտան ԱրՊՀ ուսանողների փորձուսուցումը կազմակերպել Սահմանադրական դատարանում: Հետամուտ ենք լինելու նաև, որպեսզի ՍԴ՝ իրավունքի տարբեր ճյուղերը ներկայացնող դատավորները պարբերաբար դասախոսություններով հանդես գան ԱրՊՀ-ում»:

Այնուհետև ՍԴ ներկայացուցիչները պատասխանել են համալսարանականների հարցերին, իրենց իրավասությունների շրջանակներում մեկնաբանել որոշ իրողություններ:

Հանդիպման ավարտին ԱրՊՀ ռեկտոր Ա.Սարգսյանը Հ.Թովմասյանին նվիրել է «Ղարաբաղի բարբառի բառարան» գիրքը, վերջինս էլ իր հերթին՝ մասնագիտական գրքեր ԱրՊՀ գրադարանին:

# ՀՀ ԳԱԱ ԹՂԹԱԿԻՑ ԱՆԴԱՄ, ԼԵԶՎԱԲԱՆ ԼԱՎՐԵՆՏԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ՇՆՈՐՀՎԵԼ Է ԱրՊՀ ՊԱՏՎԱՎՈՐ ՊՐՈՖԵՍՈՐԻ ԿՈՉՈՒՄ

*Արցախում էր բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Լավրենտի Հովհաննիսյանը և ԱրՊՀ-ում հանդես էր եկել դասախոսություններով:*

***ԱրՊՀ գիտական խորհրդի որոշմամբ ակադեմիկոս Ս.Աբրահամյանի անվան հայոց լեզվի ամբիոնի զարգացման գործում ունեցած ավանդի և ծննդյան 75-ամյակի կապակցությամբ բ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Լավրենտի Հովհաննիսյանին շնորհվել է Արցախի պետական համալսարանի պատվավոր պրոֆեսորի կոչում:***



Մայիսի 21-ին, ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը, շնորհավորելով Լավրենտի Հովհաննիսյանին ԱրՊՀ պատվավոր պրոֆեսորի կոչման արժանանալու և ծննդյան 75-ամյա հոբելյանի առթիվ, շնորհակալություն է հայտնել նրան՝ ԱրՊՀ հայոց լեզվի ամբիոնի զարգացման գործում ունեցած զգալի ավանդի համար և արժևորել նրա գիտական վաստակի նշանակությունը լեզվաբանության բնագավառում:

Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լավրենտի Հովհաննիսյանը ծնվել է 1944 թվականին Արցախի Մարտունու շրջանի Նորշեն գյուղում: Անվանի լեզվաբանի աշխատությունները վերաբերում են լեզվի պատմությանը, բարբառագիտությանը և ստուգաբանությանը: Հեղինակել է մի շարք աշխատություններ՝ «Դասական գրաբարի բայական ժամանակների կիրառությունը», «XVII դարի գրաբարը», «Հայերենի իրանական փոխառությունները», «Բառային տարբերակներ V դարի գրաբարում», «Հայ-իրանական նոր ստուգաբանություններ», «Գրաբարի բառապաշարը: (V դար)», «Գրաբարի բառապաշարի իմաստային խմբերի քննություն», «Հայ թարգմանական գրականութեան բառապաշարը: (Ե դար)» և այլն:

# ՄԱՅԻՍՅԱՆ ԵՌԱՏՈՆԻ ԱՌԹԻՎ ԱրՊՀ-ՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԵԼ Է ԱՐԻՈՒԹՅԱՆ ԴԱՍ



***Մայիսյան եռատոնի առթիվ մայիսի 7-ին ԱրՊՀ-ում արիության դաս է վարել ԱՀ պաշտպանության նախարար, ՊԲ հրամանատար, գեներալ-մայոր Կարեն Աբրահամյանը: Հանդիպմանը ներկա էր նաև ԿԳՍ նախարար Նարինե Աղաբալյանը:***

Ողջունելով նախարարներին և համալսարանականներին՝ ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը շնորհավորել է Մայիսյան եռատոնի առթիվ՝ կարևորելով եռատոնի կապակցությամբ կազմակերպվող հանդիպում-բանախոսությունն ու նշել, որ ԿԳՍ նախարարությունից հետո բուհի ամենասերտ համագործակցությունը ՊՆ-ի հետ է:

«ՊՆ-ի հետ համագործակցության ծրագրերի վկան այն բազմաթիվ այցելություններն են զորամասեր, որ իրականացվում են պրոռեկտորի և համապատասխան բաժնի միջոցով, այն բազմաթիվ դասընթացները, որոնք անց են կացվում սպա-հոգեբանների հետ ԱրՊՀ հոգեբանական կենտրոնում»,- նշել է ռեկտորը:

Ողջունելով ներկաներին՝ ՊԲ հրամանատարը շնորհավորել է եռատոնի առթիվ՝ կարևորելով մայիսյան հաղթանակների խորհուրդն ու նշանակությունը հայ ժողովրդի պատմության և մեր պետականության ամրապնդման գործում:

«Պատմությունը ցույց է տվել, որ մեր բոլոր հաղթանակները մեր միասնության արդյունքում են ձեռք բերվել: Մենք իրավունք չունենք միասնական չլինել: Այսօր առավել, քան երբևէ, պետք է լինենք միասնական և կարողանանք պահպանել 88-ի ոգին»,-նշել է նա՝ ընդգծելով, որ մեր անկախ պետականության երաշխիքը հայոց բանակն է, մեր ժողովրդի և պետականության լինելիության գրավականը նույնպես մարտունակ բանակն է:

ԿԳՍ նախարար Ն. Աղաբալյանը ևս շնորհավորանքի խոսք է ասել համալսարանականներին:

«Նոր սերունդը հասկանում է, թե ինչ ճանապարհ են անցել նախնիները: Յուրաքանչյուր սերունդ իր պայքարն ունի: Այս առումով մենք երջանիկ սերունդ ենք, որովհետև արժանապատվության հաղթանակ ենք կռել՝ աշխարհին ներկայանալով որպես արժանապատիվ ժողովուրդ»,-ասել է ԿԳՍ նախարարը:

# ԱրՊՀ-ՈՒՄ ԿԱՅԱՑԵԼ Է «ԱՐՑԱԽԻ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՆԵՐՈՒԺԻ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ» ՆԱԽԱԳԾԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍԸ



***Մայիսի 15-ին ԱրՊՀ-ում ներկայացվել է «Արցախի վիճակագրական ներուժի ամրապնդում» նախագիծը, որին մասնակցում էր նաև ԱՀ ԱՎԾ նախագահ Մանուշ Մինասյանը:***

Կովկասի ինստիտուտի նախաձեռնությամբ և շվեյցարական հիմնադրամի աջակցությամբ իրականացված ծրագրի արդիականությունը հիմնավորվում է նրանով, որ աշխարհում տվյալների կիրառումը աննախադեպ աճ է գրանցել և անհրաժեշտություն է առաջացել Արցախը ներկայացնել նաև տվյալների միջազգային շտեմարաններում:

Նախագծի արդիականությանն ու պահանջվածությանն անդրադարձել է ԱՎԾ նախագահ Մանուշ Մինասյանը՝ նշելով. «Կառույցը մշտապես հետապնդել է սպառողներին արդիական վիճակագրական ծառայություն մատուցելու նպատակ, իսկ նման նախագիծը կարող է լավագույնս խթանել միջազգային համադրելիությանը»:

Ներկայացնելով «Արցախի վիճակագրական ներուժի ամրապնդումը» նախագիծը՝ ծրագրի հեղինակներից Կովկասի ինստիտուտի ավագ գիտաշխատող, տ.գ.թ. Հրանտ Միքայելյանը նկատում է, որ Արցախի վիճակագրական համակարգը չճանաչված այլ երկրների համեմատ առավել արդյունավետ է գործում:

«Հաշվի առնելով համաշխարհային տենդենցները՝ կարիք կա, որպեսզի փոխակերպվեն առկա տվյալները՝ դրանք բաց հասանելիության պահոցներում ընդգրկելու համար, որը կարող է խթանել ինչպես ներդրումների մակարդակին, այնպես էլ գիտական հետաքրքրվածությանը»,- նշել է հետազոտողը:



# «ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԱՀ-ՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ ԿԼՈՐ ՍԵՂԱՆ-ՔՆՆԱՐԿՈՒՄ ԱրՊՀ-ՈՒՄ



***Մայիսի 7-ին ԱրՊՀ տնտեսագիտության ֆակուլտետի դեկան, տ.գ.թ., դոցենտ Ռուզաննա Մանգասարյանի նախաձեռնությամբ կառավարում մասնագիտացմամբ սովորող մագիստրատուրայի առաջին կուրսի ուսանողները կազմակերպել են կլոր սեղան-քննարկում՝ «Գյուղատնտեսության աջակցության հիմնախնդիրները ԱՀ-ում» թեմայով: Միջոցառմանը մասնակցում էին ԱՀ գյուղատնտեսության նախարար Ժիրայր Միրզոյանը, ոլորտի պատասխանատուներ, ԱՀ Ազգային վիճակագրական ծառայության նախագահ, տ.գ.թ., դոցենտ Մանուշ Մինասյանը, ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը, պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ, ուսանողներ:***

Ռ. Մանգասարյանը, կարևորելով թեմայի ուսումնասիրության արդիականությունը, նշել է, որ մրցունակ տնտեսության ձևավորման գրավականներից մեկը զարգացած գյուղատնտեսությունն է, որը եղել և մնում է ազգային տնտեսության կենսականորեն կարևոր ոլորտը:

Ուսանողները ինքնուրույն հետազոտական-վերլուծական աշխատանքներով ներկայացրել են ԱՀ գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամի իրագործած միջոցառումները, որոնք նպաստում են ԱՀ գյուղատնտեսության ռազմավարական ծրագրի քաղաքականությանը, կատարել են գյուղատնտեսության ոլորտի SWOT վերլուծություն՝ ներկայացնելով ուժեղ և թույլ կողմերը՝ որպես ուժեղ կողմ նշելով բարենպաստ կլիմայական պայմաններն ու բարենպաստ հարկային դաշտի առկայությունը: Նրանք նաև սոցհարցում են իրականացրել գյուղատնտեսությամբ զբաղվող սուբյեկտների շրջանում և արդյունքները ներկայացրել միջոցառմանը ներկա լիազոր մարմիններին:

ԱՀ գյուղատնտեսության նախարար Ժիրայր Միրզոյանը, անդրադառնալով ուսանողների վերլուծություններին և ոլորտում առկա ոռոգման խնդիրներին, պարզաբանել է որոշ հարցեր՝ ընդգծելով, որ գյուղտեխնիկայի ապահովվածության ուղղությամբ վերջին տարիներին կառավարությունը բավականին մեծ ներդրումներ է կատարել:

«Արտերկրում ներկայանալու քաղաքական խնդիր ունենք, որովհետև այս ուղղությամբ կատարված վերլուծությունները ցույց են տալիս, որ յուրաքանչյուր «Արցախ», «Ստեփանակերտ» անունը կրող մակնշմամբ արտադրանք միանգամից խնդիր է առաջացնում»,- ասել է Ժիրայր Միրզոյանը::

# ԱրՊՀ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ ԿԼՈՐ ՍԵՂԱՆ-ՔՆՆԱՐԿՈՒՄ

***ԱրՊՀ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի ու հոգեբանական կենտրոնի համատեղ նախաձեռնությամբ կազմակերպվել է կլոր սեղան-քննարկում՝ «Ցեղասպանությունը կրթության ոլորտի համատեքստում» թեմայով՝ նվիրված Հայոց ցեղասպանության 104-րդ տարելիցին: Քննարկմանը մասնակցել են ԱրՊՀ ՈՒՇՀՀՏԱ գծով պրոռեկտոր Վ. Յարամիշյանը, մանկավարժության և սպորտի ֆակուլտետի դեկան Շ. Այդինյանը, դասախոսներ և ՏՄՄ 1-ին, 2-րդ և հոգեբանություն 2-րդ կուրսի ուսանողները:***



Միջոցառման ընթացքում քննարկվել են այնպիսի հարցեր, ինչպիսիք են Հայոց ցեղասպանության հոգեկան տրավմայի ներկա դրսևորումները, ցեղասպանության ժխտման ազդեցությունը հասարակական առողջության վրա և ցեղասպանության ժխտումը՝ որպես թուրք էթնոսի քաղաքակրթվածության ցուցիչ, արդյոք ցեղասպանության ճանաչումը կնպաստի «ցեղասպանված ազգի» սինդրոմից ազատվելուց, ինչպես փոխանցել ցեղասպանության թեման սերունդներին, ցեղասպանության թեմատիկայի լուսաբանումը կրթության ոլորտում և ուսուցչի դերը ցեղասպանության թեման աշակերտներին ճիշտ մատուցելու գործում:

Քննարկման վերջում մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչ, մ.գ.թ., դոցենտ Է. Բաղդասարյանը նշել է, որ պետք է այնպիսի սերունդ դաստիարակել, որ հայ դատի լուծումը դառնա ազգային գերագույն նպատակ: